

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/3

1 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ռ և Պ ՍԿԷՆԱՌ» առողջության վերականգնողական կենտրոն ՍՊԸ բողոքը ՀՀ ՖՆ ՕՀՎ 31.07.2015 թ-ի թիվ 1428290 վարչական ակտի դեմ:

«Ռ և Պ ՍԿԷՆԱՌ» բողոքում բերված փաստարկները.

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական տեսչության կողմից 2015 թվականի հունվարի 6-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում քննարկվել է «Ռ և Պ ՍԿԷՆԱՌ» առողջության վերականգնողական կենտրոն ՍՊԸ գործունեության ընթացակարգը, որի արդյունքում կայացվել է կարգադրագիր (12.02.2015թ. թիվ 217902-15/Վ/Ա-010)՝ կենտրոնի լիցենզիայի գործունեությունը դադարեցնելու մասին:

Հարցը քննարկող մարմինը պատշաճ ձևով չի ուսումնասիրել ընկերությանը վերաբերվող փաստաթղթերի փաթեթը և անհիմն եզրակացության է հանգել, թե իբրև ընկերության գործունեության վայրը փոխելու մասին սահմանված կարգով հայտ չի ներկայացվել:

Ընկերությանը իրավունք է վերապահվել երկու ամսվա ընթացքում բողոքարկել կայացված կարգադրագիրը: Սակայն հաջորդ օրը նշված փաստաթղթի օրինակը ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ առանց սպասելու բողոքարկման ժամկետը լրանալուն:

Հաշվի առնելով, որ ՀՀ առողջապահության նախարարության պետական տեսչությունը նշված կարգադրագիրը կայացրել է առանց հիմքերի մանրակրկիտ ուսումնասիրության, դրսևորելով բացահայտ կողմնակալ մոտեցում, միտումնավոր խախտելով մի շարք օրենքների պահանջներ, ընկերության կողմից բողոք է բերվել ՀՀ առողջապահության նախարարությանը՝ վերադասության կարգով վերանայելու 12.02.2015թ. թիվ 217902-15/Վ/Ա-010 կարգադրագիրը՝ իրավական հիմքերի բացակայության պատճառով այն առ ոչինչ ճանաչելու պահանջով:

ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի ապրիլի 3-ի թիվ 787-Ա հրամանով ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական տեսչության 12.02.2015թ. թիվ 217902-15/Վ/Ա-010 կարգադրագիրն ամբողջությամբ ճանաչվել է առ ոչինչ:

ՀՀ առողջապահության նախարարի վերը նշված հրամանը փաստորեն վկայում է այն մասին, որ «Ռ և Պ ՍԿԷՆԱՌ» առողջության վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ի կողմից օրենքի որևէ խախտում թույլ չի տրվել:

Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցների կողմից շուրջ տասը տարիների գործունեության բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում «Ռ և Պ ՍԿԷՆԱՌ» առողջության վերականգնողական կենտրոն ՍՊԸ կողմից օրենքի խախտման որևէ փաստ չի արձանագրվել:

ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի ապրիլի 3-ի թիվ 787-Ա հրամանի օրինակը ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզության վարչություն, սակայն անհասկանալի պատճառով այն թողնվել է

անհետևանք և հիմք ընդունելով առ ոչինչ ճանաչված 12.02.2015թ. թիվ 217902- 15/Վ/Ա-010 կարգադրագիրը՝ ընկերությանը տուգանելու որոշում է կայացվել:

Բողոքաբերը չի ուզում անդրադառնալ հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ 31.07.2015թ. թիվ 1428290 ակտի ոչ իրավական, ոչ էլ բարոյական կողմին և խնդրում է ուսումնասիրել սույն բողոքի հիմք հանդիսացող փաստաթղթերը և առ ոչինչ ճանաչել օպերատիվ հետախուզության վարչության 31.07.2015թ. թիվ 1428290 ակտը:

«Հ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«Հ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Հ ՖՆ ՕՀՎ 31.07.2015 թ-ի թիվ 1428290 վարչական ակտով մասնավորապես արձանագրվել է, որ ս/թ հունիսի 5-ից մինչև հուլիսի 30-ը (ՕՀՄ 7) շրջանակներում կատարվել է իրերի և փաստաթղթերի հետազոտում «Ռ և Պ ՍԿԷՆԱՌ» առողջության վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ի կողմից ըստ գործունեության վայրերի առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու փաստի ճշտման նպատակով:

«Հ ՖՆ ԻՀՎԿԻ վարչությունից տրամադրված նյութերի համաձայն ընկերությանը 13.04.2004թ-ին «Հ առողջապահության նախարարության կողմից տրվել է կ-XX-000513 լիցենզիան արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայություն իրականացնելու համար ք.Երևան, Վ.Փափազյան փող. 22 շ. բն. 30 հասցեով, սակայն գործունեությունը իրականացրել է լիցենզիայում չնշված այլ հասցեներում՝ նախ 2003թ-ից մինչև 30.06.2012թ-ը ք.Երևան, Գյուրջյան 10, այնուհետև սկսած 01.02.2012թ-ից մինչև 30.11.2014թ-ը՝ ք.Երևան, Գայի պող. 1 հասցեներում:

«Հ կառավարության 29.06.2002թ-ի թիվ 867 որոշմամբ հաստատվել է «ՀՀ-ում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման կարգը», որի 8-րդ կետի համապատասխան նույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:

Ընկերությունը խախտել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, գործունեությունը իրականացրել է լիցենզիայում չնշված վայրերում՝ առանց այդ մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում վերաձևակերպման հայտ ներկայացնելու, ինչը օրենքի համաձայն համարվում է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն: Գործունեության վայրի փոփոխության դեպքում վերաձևակերպման հայտ ներկայացնելու պահանջ նախատեսող օրենքի փոփոխությունը գործում է 2011 թ-ի հուլիսի 1-ից:

Ելնելով վերոգրյալից՝ «Հ ՖՆ ՕՀՎ 31.07.2015 թ-ի թիվ 1428290 վարչական ակտով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ ընդհանուր գումարով 1.100.000 դրամ:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների իրականացման ժամանակ լիցենզավորված անձինք պարտավոր են պահպանել իրավական ակտերով, այդ թվում՝ նաև լիցենզավորման կարգերով և միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով տվյալ գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պահանջները կամ պայմանները:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիան պետք է բովանդակի մասնավորապես, հետևյալ պարտադիր վավերապայմանը՝ գործունեության իրականացման վայրը (հասցեն) (նշվում է, եթե նույն օրենքի համաձայն լիցենզավորման ենթակա գործունեությունը պետք է իրականացվի միայն լիցենզիայում նշված վայրում): Օրենքի 43-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի աղյուսակի տասներորդ սյունակում «Վ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվող լիցենզավորված անձինք պարտավոր են լիցենզավորման ենթակա գործունեությունն իրականացնել միայն լիցենզիայում նշված վայրում:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե բարդ լիցենզիա ստացած լիցենզավորված անձին գործունեության իրականացման լիցենզիա տալու համար օրենքով կամ լիցենզավորման կարգով գործունեության իրականացման վայրի նկատմամբ հատուկ պահանջներ են սահմանվել, ապա լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու վայրը կարող է փոփոխվել, կամ տվյալ լիցենզավորված անձն այդ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով նոր վայրում գործունեություն կարող է իրականացնել միայն գործունեության վայրի վերաբերյալ սահմանված հատուկ պահանջները բավարարող օրենքով կամ լիցենզավորված կարգով նախատեսված փաստաթղթերի ներկայացման դեպքում: Նույն մասի պահանջների խախտմամբ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելը համարվում է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացում: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հոդվածի պահանջը տարածվում է միայն լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակների վրա, որոնք նույն օրենքի համաձայն պետք է իրականացվեն միայն լիցենզիայում նշված վայրում, իսկ 8-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ սյունակում նշված է «Վ» տառը, ապա յուրաքանչյուր վայրում գործունեություն իրականացնելու համար տրվում է առանձին լիցենզիա:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով: Առանց լիցենզիայի նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն և լիցենզավորման համար զանձվող պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

Հաշվի առնելով վերոնշյալը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի հստակ պահանջն է՝ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ սյունակում «Վ» տառը նշված լինելու դեպքում յուրաքանչյուր վայրում գործունեություն իրականացնելու համար առանձին լիցենզիայի անկայությունը: Հակառակ դեպքում իրականացվող գործունեությունը համարվում է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացում և առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Տվյալ դեպքում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակով սահմանված բարդ ընթացակարգով լիցենզավորման ենթակա՝ կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակի համար «Վ» տառի պահանջը (լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը պետք է իրականացվի միայն լիցենզիայում նշված վայրում) սահմանվել է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 08.12.2010թ. ՀՕ-227-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 01.01.2011թ.-ից): Ընդ որում, նշված օրենքի 9-րդ հոդվածի (անցումային դրույթներ) 4-րդ մասի համաձայն նույն օրենքի ուժի

մեջ մտնելուց հետո «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների համար նոր պայմաններ և պահանջներ առաջանալու դեպքում տրամադրված լիցենզիաները ենթակա են վերաձևակերպման՝ նույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում: Նշված ժամկետում լիցենզիաների վերաձևակերպման դեպքում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում: Ընդ որում, նշված ժամկետում լիցենզիաները չվերաձևակերպելու դեպքում լիազոր մարմինը կասեցնում է լիցենզիաների գործողությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 08.12.2010թ. ՀՕ-227-Ն օրենքով նոր պայմաններ ու ու պահանջներ են սահմանվել կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակի համար՝ սահմանվել է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը միայն լիցենզիայում նշված վայրում իրականացնելու և գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար առանձին լիցենզիայի առկայության պահանջը: Ընդ որում, լիցենզիաների վերաձևակերպման (ըստ գործունեության իրականացման վայրի) համար օրենքը սահմանել է անցումային ժամանակաշրջան՝ մինչև 01.07.2011թ.:

Հարկ է հաշվի առնել նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ լիցենզիայի պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությունը, որը սահմանափակում է լիցենզավորված անձի իրավունքները կամ նրա համար նախատեսում է նոր պարտականություններ, ուժի մեջ է մտնում համապատասխան փոփոխությունը հրապարակելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո:

Հաշվի առնելով վերոնշյալը, 01.07.2011թ.-ից սկսած՝ կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության տեսակով գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրում գրադվելու համար պարտադիր է տվյալ վայրի համար առանձին լիցենզիայի առկայությունը (անկախ օրենքով սահմանված ժամկետում չվերաձևակերպելու) հանգամանքից:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն՝ առանց օրենքով սահմանված կարգով պետական գրանցման (հաշվառման) կամ հարկային մարմիններում հաշվառման ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպքերի հայտնաբերմանն ուղղված հարկային մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված արձանագրությունը հիմք է օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու, ինչպես նաև հարկային պարտավորություններ առաջադրելու համար:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպքերում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամից: Միաժամանակ, նշված խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտումներ կատարած անձանցից գանձվում է նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

Նույն օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի 26 հոդվածով նախատեսված խախտումներն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտնաբերվելու և արձանագրվելու դեպքում հարկային պարտավորությունները և օրենքի 26 հոդվածի երրորդ պարբերությամբ նախատեսված վնասի հատուցման գումարները հաշվարկվում և գանձման են առաջադրվում հարկային մարմնի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում և նույն օրենքով սահմանված կարգով՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:

Խնդրո առարկա դեպքում, հիմք ընդունելով վերոնշյալ իրավական ակտերը, ընդունված վարչական ակտով արձանագրվել է, որ խախտվել են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջները, համաձայն որոնց՝ 01.07.2011թ.-ից սկսած կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրում զբաղվելու համար պարտադիր է փվյալ վայրի համար առանձին լիցենզիայի առկայությունը: Ըստ այդմ, հարկային մարմնի իրավասությունների շրջանակներում կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ լիցենզավորող մարմնի իրավասություններին առնչվող գործողությունները (վերաձևակերպում, դիմումի մերժում, նախագգուշացում, լիցենզիայի գործողության կասեցում կամ դադարեցում) առնչություն չունեն հարկային մարմնի՝ վերոնշյալ իրավական ակտերով սահմանված իրավասությունների հետ: Դրանք բացառապես վերապահված են լիցենզավորող մարմնին: ՀՀ առողջապահական պետական տեսչության կարգադրագիրը կամ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով դրա առոչինչ ճանաչվելը վերաբերվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի՝ բացառապես լիցենզավորող մարմնի իրավասությունների շրջանակներին և առնչություն չունեն առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման պարագայում հարկային մարմնի կողմից պատասխանատվության կիրառման հետ: Միաժամանակ, ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կարգադրագիրը առոչինչ ճանաչվելը (առոչինչ է ճանաչվել ոչ իրավասու վարչական մարմնի կողմից ընդունվելու հիմքով) չի առնչվում առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար պատասխանատվության կիրառմանը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ ՕՀՎ 31.07.2015 թ-ի թիվ 1428290 վարչական ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

